

36(574)  
30.12.2019

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆՍ ԱՆԿԵՂԾ ՈՒ ՓՈՒՆԵՆԿԱԼԵԼԻ

Տարին վերջացավ, և այն «Լուսարարի» համար հորեյանական էր. սեպտեմբերին լրացել էր թերթի հիմնադրման 20-ամյակը: Մենք չցանկացանք դրան առանձնակի շուք տալ, ավելորդ ծնծղաներ չհինչեցրինք: Մեզ համար կարևորն այն է, սիրելի ընթերցող, որ մենք շարունակում ենք դարձյալ մնալ միասին՝ փայլախելով մեր մեջ գնահատանքի ամենալավ բառերը:

Ավելին ասենք՝ եթե այսօր «Լուսարարը» արցախյան լրատվամիջոցների մեջ ամենամեծ լսարան ունեցող պարբերականն է, դա հենց քո շնորհիվ է, որովհետև այն մանկավարժների հրապարակային խոսքի վստահելի հարթակն է: Հարկ չենք համարել երբևէ հաշվելու, թե անցած ավելի քան երկու տասնամյակում ստույգ քանի հեղինակի հետ ենք գործ ունեցել, բայց վստահաբար կարող ենք ասել՝ երբեք վատ հեղինակ չենք ունեցել: Մեր տպագրած նյութերը միշտ էլ աչքի են ընկել իրենց բովանդակային խորությամբ, թեմայի կարևորությամբ ու գրագիտությամբ: Անխտիր, առանց վերապահման ու բացառության, որովհետև մեր ՀԵՂԻՆԱԿԸ հասարակության ազնվագարն հատվածն է ներկայացնում:

Մենք նպատակ ենք ունեցել և ունենք՝ «Լուսարարը» դարձնել յուրաքանչյուր ուսուցչի առանձին թերթ: Անշուշտ, համացանցի դարում առատ են լրատվամիջոցները, տեղեկատվական աղբյուրները՝ անթիվ: Օրվա ցանկացած պահի կարող ես համացանցի միջոցով իրազեկվել, թե ինչ է կատարվում աշխարհում, քո երկրում, քո իսկ շրջապատում: Սակայն դա ընդամենը չոր տեղեկատվություն է, որը ստացվելու հաջորդ իսկ պահից կարող է կորցնել իր հրատապությունը: Թերթը և ներկա պարագայում՝ «Լուսարարը», միանգամայն այլ նշանակություն է հատկանշվում. այն ոչ միայն լրատվության սոսկական աղբյուր է, այլև ճշմարիտ խորհրդատու, անկեղծ գրուցակից, իրար ճանաչելու լավագույն միջոց: Թերթի միջոցով շատ ու շատ մանկավարժներ են ճանաչել իրար, ունեցած փորձը փոխանակել, իրարից սովորել և վերջապես՝ իսկական բարեկամներ են դարձել: Մեր փոքրիկ խմբագրակազմը նաև այս մի առաքելությամբ է հպարտ, որովհետև բարեկամության յուրօրինակ կանոնը դառնալով մասնագետների միջև՝ իրապես նպաստում է ընդհանուր գործի հաջողությանը: Իսկ այդ գործը մի ամփոփ ձևակերպում ունի՝ կրթել ու դաստիարակել ապագայի արժանի քաղաքացիներ, ինչը դուք անում եք անմնացորդ նվիրումով:

Անցած ժամանակահատվածում թերթը հարյուրավոր առաջնորդներ է հրապարակել ամենատարբեր թեմաներով: Շատ դպրոցներում դրանք տեղադրվել են պատի թերթերում, կամ պարզապես հատվածներ են գետեղվել համապատասխան նյութերում: Դա վկայում է այն մասին, որ թերթը ընթերցող փոխըմբռնումը միշտ էլ անխտոր է եղել, և այլ կերպ նույնիսկ հնարավոր չէ: Առավելագույնս՝ անկեղծ ու փոխընկալելի. այսպիսին ենք տեսնում մեր համագործակցությունը նաև մեր տարում:

Թո՛ղ «Լուսարարը» յուրաքանչյուրիդ ընտանքին լույս ու հավատ բերի, 2020 թվականը դառնա իր ծերի լիարժեք իրակացման տարի, իսկ հայոց երկնակամարում ուրախ բոցավառվեն միայն հաղթանակի հրավառության կրակները:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

«ԼՍԱՐԱՐ»

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՏ ՆՈՐԱՆԱԼՈՎ

Համո ՍԱՐՅԱՆ

Հրաժեշտի ու հանդիպման երանելի մի ակնթարթ ... Ջրը՝ նոսր, գրը՝ նոսր, - ծոր է տալիս ժամացույցի զանգը հանդարտ: Սեղանների վրա թողած իր օրհնությունն ու իր բարին, Հարազատի հոժարությամբ Հեռանում է հոգնած տարին: Մանուկ տարին իր սպիտակ հանճարուրից աչքը բանում, Ուրախություն, ուրախություն, Ուրախություն է խոստանում: Ուրախանանք մոր տարու հետ - Նոր տարու հետ նորանալով, Հին հոգսի հետ մեր բունքերի ճեղքակն անգամ մոռանալով... Եկեք մաղթենք այսպես կանգնած Սեղանների շուրջը հարուստ - Գնացողին՝ բարի ճամփա Ու եկողին՝ բարի գալուստ: Խմենք կենացն այս մոր տարու, Մի քիչ բացվենք ու արթնանանք, Տխրությունը միշտ կը լինի, Այսօր մի լավ ուրախանանք, Մեր սրտերում ուրախության Կրակն այնպես թող ճարճատի,

Որ ծիծաղներ ծաղկին՝ ծալ-ծալ Ակունքերում մեր ճակատի:

Ուրախանանք մոր տարու հետ, Նոր տարու հետ նորանալով, Դալարելով մեր կյանքն ապրենք, Ոչ թե՛ դանդաղ չորանալով... Խաղաղություն մաղթենք հողին, Մաղթենք՝ ամեն սար ու ծորում Բողբոջներին բացվելու բախտ, Եվ ծիլերին՝ հասկավորում: Սիրողներին մաքուր սիրո Հավատ մաղթենք մի հաստատուն, Իմաստունին կորով մաղթենք, Եւ կտրիճին՝ իմաստություն: Մերձավորին վստահություն, Մեծավորին՝ ներող հոգի, Բարուն ազատ թեւեր մաղթենք Եվ բարություն՝ ամեն ոքի: Բուր մարդկանց մաղթենք՝ իրար Ջերմացնող մի ջերմություն, Մի մտերիմ, մի մտերիմ, Մի մտերիմ մտերմություն: Ուրախանանք մոր տարու հետ Նոր տարու հետ նորանալով, - Մեզ ավելի լավ ճանաչենք Մեր հուզու մեջ խորանալով... Եկեք խմենք մեր այս միակ, Անկրկնելի կյանքի կենաց,



Մեր ծեռքերի ճարտարության Ու մեր արդար ջանքի կենաց, Այս մոր տարվա առաջին ծյան Եվ առաջին ծաղկի կենաց ... Չարկենք թասերն ու դատարկենք Մեր այս սեղան-սինու կենաց, Քանի գինին մեզ չի խմել, Խմենք նաեւ գինու կենաց... Մեր սրտերում ուրախության Կրակն այնպես թող ճարճատի, Որ էլ հոգսի հետք չմնա Կնճիռներում մեր ճակատի: Ուրախանանք մոր տարու հետ, Նոր տարու հետ գորանալով, - Շտկենք սապատն այս աշխարհի, Թեկուզ մի քիչ կորանալով:

## ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՈՒ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ԴԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՎԱԶԻ ՆՏՏԱՎԱՅՐՈՒՄ



Ավանդույթի համաձայն տարեմուտին ամփոփվեցին մեր երկրի մարզական հաջողությունները, և տեղի ունեցավ մարզաշխարհի արցախյան լավագույն ներկայացուցիչների պարգևատրման հանդիսավոր արարողություն:

ԱՀ նախագահի տեղեկատվության գլխավոր վարչության հաղորդմամբ՝ Արցախի Հանրապետության Նախագահի նստավայրում դեկտեմբերի 26-ին տեղի է ունեցել 2019 թվականին միջազգային եւ հայրենական հարթակներում բարձր արդյունքներ արձանագրած Արցախի մարզիկների ու մարզիչների պարգևատրման հանդիսավոր արարողություն:

Դրանական պարգևներ հանձնելով մեծ նվաճումների հասած մարզիկներին ու նրանց մարզիչներին՝ Նախագահ Բակո Սահակյանը հույս է հայտնել, որ պետք է զարգացնել սպորտի և ֆիզկուլտուրայի ոլորտում վերջին տարիների արդյունքները, որի համար նախադրյալներն առկա են:

Իր ելույթում Նախագահ Սահակյանը նշել է, որ 2019 թվական

ի վիճակի եք դա անել: Համոզված եմ, որովհետև ձեր կողմից գրանցված արդյունքները վկայում են, որ դուք աշխատասեր եք, համառ, երբեկից չեք խուսափում դժվարություններից եւ ամենայն պատասխանատվությամբ եք վերաբերվում ձեր առջեւ ծառայած խնդիրների լուծմանը»,- ընդգծել է իր ելույթում Բակո Սահակյանը:

Հանդիսավոր արարողության ժամանակ Նախագահ Սահակյանը ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման, մարզական հերթափոխի պատրաստման գործում ունեցած ավանդի համար ոլորտի մի խումբ ներկայացուցիչների հանձնել է ԼՀՀ վաստակավոր մանկավարժի, Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործչի եւ վաստակավոր

եւ ժողովրդին՝ խաղաղություն ու բարեկեցություն:

Հանդիսավոր միջոցառմանը ելույթ է ունեցել նաև ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

\*\*\*



Նույն օրը մեծ թվով մարզիկների և նրանց մարզիչների պարգևատրման արարողություն է տեղի ունեցել նաև կրթության, գիտության և սպորտի նախարարությունում:

- Ուրախ եմ արձանագրելու, որ 2019-ին մեր մարզական հաջողություններն ավելացել են: Պետական ճիշտ քաղաքականության արդյունքում ավելանում են ոչ միայն մարզածները, ոչ միայն ավելի շատ հնարավորություններ են ստեղծվում մարզումների համար,

մասնակցելու տարբեր մրցումների, այլև ստեղծվում են մոր մարզակառույցներ, մոր հնարավորություններ և մոր պայմաններ: 2019-ը Արցախի համար նաև սպորտային տարի էր, և աշխարհին Արցախը ներկայացավ նաև որպես սպորտային երկիր:

մարզչի կոչումների վկայականները:

Երկրի ղեկավարն ի սրտե շնորհավորել է միջոցառման մասնակիցներին գալիք Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ՝ մաղթելով նրանց քաջառողջություն, երջանկություն ու ամենայն բարիք, մեր հայրենիքին

### ՏՈՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

## ԽՐԱՆՈՒՄՎԵՅԻՆ ԱՊԱԿԱ ԱՐԶԵՍԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԻՆ ՕՂԱԿԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

Կրթական համակարգի բնականոն զարգացումը պահանջում է նրա բոլոր օղակների լիարժեք առկայությունը ու գործունեությունը, ինչին էլ ուղղված է ոլորտի պետական քաղաքականությունը: Այդ օղակներից այսօր թերևս խոցելի վիճակում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունն է: Ոլորտի ներկայացուցիչները՝ լավագույն ուսանողներ և դասավանդողներ, տարեմուտին հյուրընկալվեցին ԱՅ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում հաճելի առիթով. նախարարի հրամանով նրանք ներկայացվել են պարզևստիմամբ, ինչն իր տեսակի մեջ առաջին անգամ է: «Առաջինն է, բայց վստահ եմ, որ ավանդույթ կդառնա, որովհետև մենք անչափ կարևորում ենք մեր կրթական համակարգում նախնական և միջին մասնագիտական կրթության օղակը և ամեն ինչ պետք է անենք, որ այն ավելի ուժեղացնենք»,- ողջունելով նրանց՝ ասաց նախարար Նարինե Աղաբալյանը: Նախքան պարզևստիմամբ արարողությանն անցնելը նախարարը որոշ տեղեկություններ ներկայացրեց նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում կատարված աշխատանքների մասին և սկսեց ամենաթարմ լուրից. հանրապետության Նախագահը որոշում է ստորագրել Բերծորում գյուղատնտեսական ուղղվածությամբ քոլեջ ստեղծելու մասին: Արդյախում գործող ուսումնական հաստատությունների թիվը կավելանա և մեկով, որը ստեղծվում է ԱՄՆ-ում բնակվող մեր հայրենակիցների՝ «Անուշավան և Օֆիլ Աբրահամյանների» հիմնադրամի միջոցներով: Ակնկալում ենք, որ արդեն սեպտեմբերին այն կսկսի դիմորդների ընդունելություն կատարել:

Կրթության համակարգում մենք չենք կարող բարեփոխումներ իրականացնել, եթե նախնական և միջին մասնագիտական օղակում չկատարենք դրանք, քանի որ մեր երեխաներին պետք է այլընտրանք առաջարկենք: Այսօր մեր աշխատանքային լցված է բարձրագույն կրթությամբ դիպլոմավորված մասնագետներով, որոնց մի զգալի մասը չի կարողանում գտնել համապատասխան աշխատանք, որովհետև աշխատաշուկայում այդքան պահանջարկ չկա: Փոխարենը կա պահանջարկ վարպետների, միջին օղակի մասնագետների, բայց մենք չունենք այդ մասնագետները: Թյուր կարծիք կա, որ բարձրագույն կրթությունը ստացածներն ավելի բարձր են վարձատրվում, դրա համար շատերը ձգտում են անպայման գնալ համալսարան, և արդյունքում ստացվում է, որ դիպլոմ ունեն, բայց չունեն աշխատանք և ընդհանրապես չեն կարողանում վաստակել: Սակայն մենք բոլորս գիտենք, որ կարևորը մասնագիտության մեջ լավագույնը լինելն է, և կապ չունի՝ ինչ մասնագիտություն է, պարզապես պետք է կարողանալ լավ մասնագետ լինել, ու այդ ժամանակ պահանջարկը կլինի: Մենք ձգտում ենք ահա այդ լավ մասնագետներին պատրաստել՝ հաշվի առնելով նաև մեր տնտեսության պահանջարկը, մեր հնարավորությունները,- ասաց Ն. Աղաբալյանը:

Ինչո՞ւ հենց Բերծորում որոշվեց հիմնել գյուղատնտեսական քոլեջ. Քաշաթաղի շրջանում գյուղատնտեսական նշանակության մեր հողերի զգալի մասն է, բայց չունենք համապատասխան մասնագետներ: Նախարարը որոշ տեղեկություններ հաղորդեց նաև այս օղակի մյուս ուսումնական հաստատություններում սկսված աշխատանքների մասին: Բարեփոխումներ են իրականացվում «Քրիստոնյաները կարիքի մեջ» հասարակական կազմակերպության օգնությամբ այս աշխատանքները սկսված են: Ուսումնարանում ստեղծվում է նոր արհեստանոց, փայտամշակման հաստոցները արդեն ճանապարհին են իտալացի վարպետների հետ միասին: Նրանք կժամանեն ու երեք մասնագիտությունների՝ փայտամշակման, վարսավիճակման արվեստի և հասարակական սննդի մասնագիտությունների ուղղությամբ կսկսեն նոր կրթական ծրագրեր իրականացնել ու մասնագետներ պատրաստել: Այդ նպատակով արդեն սկսվել է շարունակվելու են իտալերենի դասընթացները: Օտար լեզուների իմացությունն անհրաժեշտ է մասնագիտության մեջ հաջողության հասնելու համար: «Նախարարությունն էլ պատրաստ է կազմակերպելու ուսանողների փորձուսուցումը, ուսումնառությունը արտերկրում, որպեսզի նրանք կատարելագործվեն ընտրած մասնագիտության մեջ»,- վստահեցրեց Ն. Աղաբալյանը:



Ստեփանակերտի բժշկական քոլեջի, ինչպես նաև Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարանների շենքային պայմանները բավարար չեն: «Մեր պայմանները մեր խոցելի տեղն են, և մենք այս ուղղությամբ ևս պետք է փնտրենք հովանավորներ ու ծրագրեր իրականացնենք»,- շարունակեց Ն.Աղաբալյանը՝ կոնկրետ բժշկական քոլեջի մասին ասելով, որ որոշ աշխատանքներ արդեն արվում են, որ գոնե տանելի պայմաններ ստեղծեն ուսումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: ԿԳԱՆ-ն առողջապահության նախարարության հետ պայմանավորվածություն ունի, և արդեն սկսվել են աշխատանքները անհրաժեշտ նյութեր, դիզայնի և պարագաներ քոլեջի տրամադրելու, ուսանողների փորձուսուցումը հիվանդանոցներում կազմակերպելու ուղղությամբ: Փոքրիկ նվիրատվությունների միջոցով բարելավվում են Մարտունու արհեստագործական ուսումնարանի պայմանները: «Բայց մեր նշածողն այսօր Շուշիի «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանն է՝ որպես ամենաժամանակակից կրթական հաստատություն: Եվ մեր երազանքն է, որ ոլորտի բոլոր հաստատությունները բարձրացվեն այդ մակարդակին,- ասաց Ն. Աղաբալյանը: Բոլոր ուղղություններով կարծես թե փոքրիկ քայլերով առաջընթաց կա, բայց հուսով ենք, որ 2020թ. մենք ավելի մեծ քայլերով ենք կարողանալու առաջ գնալ»:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում լավագույն սովորողներին ու վարպետներին և մասնագիտական առարկաներ դասավանդողներին հրամանական պարգևով, պատվոգրով ու այլ միջոցներով խրախուսում են ինքնանպատակ չէ. դա օրինակ պետք է ծառայի մյուսներին, և այն աշակերտները, ովքեր դեռ չեն կողմնորոշվել իրենց ապագա մասնագիտության հարցում, ճիշտ ընտրություն կատարեն, գնան դեպի այն մասնագիտությունները, որ իրենց տարածաշրջանում մեծ պահանջարկ ունեն, որպեսզի վաղն ապահովված լինեն իրենց սրտին մոտ և բարձր վարձատրվող աշխատանքով: Նարինե Աղաբալյանը շնորհավորեց գալիք Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ. «Թող բոլորիդ օջախներում լինի ջերմություն, ուրախություն, և Նոր տարին դիմավորենք ուրախ տրամադրությամբ, ամենք մեզմիջ կախված, որ մեր երկրում կայունություն և խաղաղություն լինի»:

Ս. ԽԱԶԱՏՅԱՆ

## ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՈՒ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ



1 Մենք կարողացանք պատվով կազմակերպել թե՛ Conifa-ի ֆուտբոլի եվրոպայի առաջնությունը, թե՛ Համահայկական խաղերը, և թե՛ «Պար» առանց սահմանի» սպորտային պարերի միջազգային առաջնությունը: Եվ այս ամենն էլ ավելի ճանաչելի դարձրեց Արցախը, ու դրան գունարվեցին նաև մեր մարզիկների հաջողությունները տարբեր մրցասպարեզներում, տարբեր հերթակներում: Ուզում են շնորհակալություն հայտնել բոլորիդ, որովհետև ձեզմիջ յուրաքանչյուրի պատվին բարձրացվում է հայկական դրոշ, բարձրացվում են մեր պետության անունն ու հեղինակությունը, և դուք նպաստում եք մեր հայրենիքի էլ ավելի հզորացմանը,- ասել է նախարար Ն.Աղաբալյանը: Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարը շնորհավորել է բոլորին գալիք տոների՝ Նոր տարվա և Սուրբ Ծննդյան առթիվ. «Ուզում ենք, որ 2020 թվականը բոլորս կարողանանք նշանավորել նոր հաջողություններով ու հաղթանակներով: Մաղթում են խաղաղություն մեր երկրին, բարի ծառայություն մեր բոլոր գիմնորդներին, մեր Պաշտպանության բանակին, որպեսզի կարողանանք զբաղվել մեր ստեղծագործ գործունեությամբ, կարողանանք նվաճել նոր բարձունքներ թե՛ սպորտի, թե՛ մշակույթի, թե՛ կրթության, թե՛ տնտեսության տարբեր ոլորտներում»:

## ՀՕՄ-Ի ԱՄԱՆՈՐՅԱ ԱՆԱԿԿԱԼԸ ԹԱԼԻՇԻ ԵՎ ՄԱՏԱՂԻՍԻ ՓՈՔՐԻԿՆԵՐԻՆ

Հայ օգնության միության Արցախի միավորի անդամները Ամանորի շեմին այցելել են Արցախի սահմանամերձ Մատաղիս և Թալիշ համայնքներ և նվերներ հանձնել տեղի աշակերտներին ու մանկապարտեզի սաներին:



ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության, ԱՄՆ Արևելյան և Արևմտյան շրջանների և անհատ բարերարների հովանավորությամբ գրեմական պիտույքներ, խաղալիքներ, անձնական հիգիենայի միջոցներ, քաղցրեղեն ու հագուստ և այլ պարագաներ պարունակող տուփերը փոխանցվել են հիշյալ երկու համայնքների փոքրիկ բնակիչներին: ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհի Արմինե Հարությունյանը նշել է, որ վերջին անգամ ՀՕՄ-ը Մատաղիս և Թալիշ էր այցելել 2015թ. դեկտեմբերին, ապրիլյան պատերազմից մի քանի ամիս առաջ և հիմա անչափ ուրախ են՝ կրկին տեսնելով աշակերտների աշխուժությունն ու եռուզեռը դպրոցներում: «Դուք մեր հյուսիսային սահմանի պատվարն եք, մենք ձեր շնորհիվ ենք հանգիստ ապրում,

որովհետև գիտենք, որ մեր հյուսիսային սահմանն անառիկ է: Ապրելով այս սահմանային գյուղում՝ դուք ուժ եք տալիս մեզ բոլորիս»,- ասել է Արմինե Հարությունյանը: Մատաղիսի միջնակարգ դպրոցում սովորում է 106 աշակերտ: ՀՕՄ-ը մշտապես կապ է պահում դպրոցի հետ, աջակցում: «Երեխաները շատ են ոգևորվում, երբ գգում են, որ սահմանին մենակ չեն: Իսկ 2016-ի ապրիլից հետո

բոլորը շատ կարճ ժամանակում վերադարձել ու լծվել են իրենց առօրյա հոգաբերին: 2007թ. շահագործման հանձնված դպրոցը ապրիլյան պատերազմի ժամանակ բավականին վնասվել էր: Կանադահայության միջոցներով կարճ ժամանակում վերանորոգվեց, ու սեպտեմբերից ամբողջովին հիմնանորոգված դպրոցում էինք դասեր անում: Եվ աշակերտները դպրոցի «վերջերը» չտեսան»,- ասաց դպրոցի տնօրեն Գեղամ Աղաջանյանը՝ հատուկ շնորհակալություն հայտնելով կանադահայ



բարերար Սկրտիչ Սկրտչյանին: Թալիշի նորակառույց միջնակարգ դպրոցը սաներին իր գիրկն է ընդունել այս տարվա նոյեմբերի 4-ին: Ներկայումս սովորում է 26 աշակերտ: Որոշ ընտանիքներ նույնպես կվերադառնան իրենց բնակարանների շինարարության ավարտից հետո: Թալիշի դպրոցի տնօրեն Տանյա Մեծունցը գոհ է նոր դպրոցի պայմաններից, միայն որոշ մասնագետների կարիք ունեն: Նրա խոսքով՝ նման այցելությունները, ուշադրությունը ավելի են ոգևորում գյուղի բնակիչներին: Եթե նրանք անտեսված լինեին, կընկճվեին, բայց իրենց նկատմամբ մեծ ուշադրությունը, ինչպիսին նաև նման այցերն են, ոգևորում և թև են տալիս: Հավելենք, որ ՀՕՄ-ի Արցախի միավորի վարչության և ՀՀԳ Արցախի երիտասարդական միության անդամները մասնակցել են Մատաղիսի և Թալիշի դպրոցների ամանորյա հանդեսներին, որոնց ժամանակ էլ փոխանցել են նվերները:

Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

ԲԱՐԻՆ ԸՆԴ ՁԵՁ

ՆՈՐ ՏԱՐԻՄ՝ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ



Մեր հարցերին պատասխանում է ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ ՇՈՒՇԱՆ ԱՍԿԱՐՅԱՆԸ:

- Անցնող տարում ի՞նչը կարող եք նշանակալից համարել ամբիոնի և առհասարակ ԱրՊՀ-ի համար:

- Արցախի պետական համալսարանը հանրապետության խոշորագույն գիտակրթական կենտրոնն է, որն իր կեսդարյա պատմության ընթացքում արժանացել է «Մայր բուռ» պատվանվանը և արժանապատվորեն կրում է այն՝ մշտապես պատրաստակամ լինելով նպաստել հարավուփոխ պահանջներով Արցախում կրթության և գիտության տարածմանը:

Անցնող տարում սկսվել է ԱրՊՀ-ի համար խիստ կարևոր ու պատասխանատու մի գործընթաց. համալսարանը պատրաստվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման, և ըստ այդմ բոլոր ստորաբաժանումների նպատակային մասնակցությամբ սկսվել են ԱրՊՀ գործազան ռազմավարական ծրագրից բխող նպատակների, խնդիրների ու դրանց իրագործման աշխատանքները:

Բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի համար տարին բավական հագեցած էր: Ամբիոնի դասախոսները տպագրել են գիտական հոդվածներ, մեծագույն

թյուններ ու ուսումնամեթոդական ձեռնարկներ: Կարևորելով մանկավարժական կրթության համակարգում բուհ-հանրակրթություն կապը որպես ապագա ուսուցիչների նախապատրաստման կարևոր պայման՝ ամբիոնը համագործակցել է դպրոցների հետ, այնտեղ իրականացրել ուսումնական և մանկավարժական փորձուսուցում:

EPNK ծրագրի շրջանակում Արցախում գործող «Բաց հասարակություն» հասարակական կազմակերպությունը բրիտանական International Alert ոչ կառավարական կազմակերպության հետ համագործակցության արդյունքում այս տարի լրագրության բաժնում իրականացրել է ութամսյա տևողությամբ մուլտիմեդիա դասընթացների շարք, որոնց արդյունքում լրագրության բաժնի 2 ուսանողներ՝ Ինգա Գրիգորյանը և Արաքսյա Միրզոյանը, հնարավորություն են ունեցել մասնակցել Բրյուսելում կազմակերպված մուլտիմեդիայի հնգօրյա դասընթացին:

Արցախի հանրային հեռուստառադիոընկերության հետ համագործակցության արդյունքում լրագրության բաժնի մի խումբ ուսանողներ ներգրավվել են Արցախի հանրային հեռուստաընկերության «Ողջույն, Արցախ» հաղորդաշարի ստեղծագործական թիմի աշխատանքներին:

- Եղե՞լ են ծրագրեր կամ պլաններ, որոնք չեք հասցրել կատարել 2019-ին:

- Բարեբախտաբար մեր կողմից նախանշված բոլոր ծրագրերն ու պլանները հաջողությամբ կարողացել ենք ավարտին հասցնել:

- Ի՞նչ նոր մարտահրավերներ եք տեսնում բարձրագույն կրթության ասպարեզում 2020 թվականին:

- Այսօր Արցախն իր պատմական գարգացման նոր շրջափուլում է: Հանրային կյանքի օրակարգային կերպափոխումները պահանջում են միանգամայն նոր և արդիականացված մոտեցումներ

կրթական համակարգի նկատմամբ: Ըստ այդմ պետք է անցկացվեն բարեփոխումներ, որոնք կբխեն տարածաշրջանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային-մշակութային հիմնադրույթներից:

Բարձրագույն կրթության ոլորտում մեր կողմից խիստ կարևորվում է նաև կարողությունների, ռեսուրսների ու կարգային ներուժի արդյունավետ օգտագործումը: Այսօր երիտասարդ գիտնականի և գիտաշխատողի համար հայրենիքից հեռու ավելի գրավիչ պայմաններ են ստեղծվում աշխատելու, վաստակելու կամ դրամաշնորհային ծրագրերին մասնակցություն ունենալու առումով: Եվ, ցավոք, մեր պատմության էջերում բազմաթիվ են օրինակները, երբ հայազգի մտավորականները, զինվորականներն իրենց ողջ ներուժը ծառայեցրել են այլ երկրի բարօրությանն ու զարգացմանը: Ըստ իս, սա լուրջ մարտահրավեր է, որի լուծման ուղղությամբ առայժմ նպատակային գործիքակազմ չի մշակվել:

Արցախն ունի ներկայանալի գիտական մակարդակ ունեցող գիտնականներ, որոնք իրենց կարողություններն ու հմտությունները պիտի ծառայեցնեն հետազոտահեն կրթության տարածմանը և արցախյան հիմնախնդրի լուծման գերակայությամբ հետազոտությունների իրականացմանը:

- Գալիք տարին ըստ կենդանակերպի Առնեստի տարի է, ի՞նչ խորհուրդ ունի այն Ձեզ համար:

- Աշխատանքային գործունեության ընթացքում անցնող կամ գալիք տարիների խորհուրդը կենդանակերպի նշաններով երբևէ չեն պայմանավորել:

- Ձեր մաղթանքը Ամանորի առթիվ:

- Լուսավոր այս տոնի առթիվ բոլորին կբարեմաղթեի խաղաղություն, մեծ ուժ և կորով մեծ ու հայրենամուտ գործեր իրականացնելու ակնկալիքով:

Ս. ՎԱՔՐԻԵՆՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԱՂԹԱՆԵՐ

Արդ ի՞նչ են ուզում, Հայրենակիցներ, Ձեզ սրտանց մաղթել. Կարողանաք մի շտ Մարտնչել, հաղթել, Հեղինակ դառնաք Բարի գործերի, Մասնակցեք միայն Լավ, պետք փորձերի... Չտեսնեք, չապրեք Երբեք ցավ ու վիշտ, Հասկանաք, զգաք Մեկ-մեկու դուրք՝ միշտ, Ընթանաք կյանքի Ուղիներով ճիշտ, Ժպտաք իրար՝ տաք, Ձեր հարկերի տակ, Լինեք միածույլ, Չունենաք երբեք Խոցելի ու թույլ Դիրքեր ու կողմեր, Ձեզ չասանեն Քամիներ-հողմեր: Տոհմածառ դառնաք՝ Տարեց ու ավագ, Օջախներում ձեր Թող լինի հավաք՝ Թռան ու ծռան: Հնչեն երգ-նվագ, Լինեն մեծերի՝ Խիտ շուք ու շվաք: Ընտանիքներում՝ Մեր ու միություն, Ժպիտ, ջերմություն, Նաև լիություն՝ Բերք ու բարիքի, Դռները գոցվեն Ընդդեմ չարիքի... Խանդաղատանքից, Խինդ ու բերկրանքից Սեղաններ բացվեն, Երջանկությունից Բյուր աչքեր թացվեն, Եվ մեր գյուղական Դպրոցներում թո՛ղ Սաները լինեն Միշտ բազմաբանակ: Ունենանք գորեղ, Մարտունակ բանակ, Արտահոսքի տեղ Երբեք չընդհատվի Տուն-վերադարձը, Վերջապես լուծվի Արցախի հարցը: Մեզ ողջույն հղեն Մոսկվան, Փարիզը Եվ Վաշինգտոնը, Տոկիոն, Լոնդոնը... Կատարյալ դառնա Հաղթանակ տոնը:

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Թոշակառու ուսուցիչ ք. Ճարտար

ԼՈՒՍԱՎՈՐ ՈՒ ՊԱՅՆԱՌ ԱՄԱՆՈՐ

Ուսուցումն ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների համար ավելի հրապուրիչ ու բովանդակալից դարձնելու նպատակով մանկավարժական կոլեկտիվն ուսումնական գործընթացի մեջ ներառում է բազմաթիվ ոչ ուսումնական միջոցառումներ:

Ստեփանակերտի Հ. Թուրանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցի 2-րդ «բ» դասարանի «Աստղիկներ» խմբի ամանորյա միջոցառումը՝ ինքնատիպ բեմագրով, ճոխ զարդարանքով ու ոչ ավանդական մոտեցումներով, ապացուցեց, թե ինչ մեծ հաջողությամբ կարող են փորրիկները կյանքի կոչել ցանկացած գաղափար:

Տոնն անցավ շատ ուրախ: Դահլիճը, որպես կանոն, միշտ լեփ-լեցուն է: Եկել էին բոլոր նրանք, ում երբեք չի լքում մանկությունը. երեխաների հետ՝ ծնողներ, ընտանիքի այլ անդամներ, ուսուցիչներ, դպրոցի բարեկամներ, հյուրեր: Հանդիսությունը կազմված էր երկու մասից. առաջինում մեկը մյուսի ետևից ելույթ ունեցան դասարանի բոլոր աշակերտները, որոնք հանդիսատեսին ցուցադրեցին այն, ինչ սովորել են դպրոցում՝ արտասանել, երգել, պարել և

այլն:

Ամենապատելի են երկրորդ մասն էր՝ երեխաների համար տրվող ներկայացումները, որոնցով հանդես եկան տարրական դասարանների աշակերտները: Թեմատիկան հեքիաթային էր՝ ծննդային ու Ծննդային



յան տոներին առնչվող, վեհ ու բարի: Աշակերտներն իրենց մեծ ու լուսավոր սրահում ցուցադրեցին տոնական տրամադրությամբ լեցուն իրենց հույզերի ու երազների հեքիաթը: Նրանք ներկայացրին «Մնաք բարով, խոզուկներ, բարի գալուստ, մկնիկներ» խորհրդանշական բե-

մականացումը, որով ասվում է, որ սիրով հրաժեշտ են տալիս 2019 թվականին և մեծ շուքով դիմավորելու են նոր՝ 2020 թվականը: Բոլորն ուրախ էին և ցնծացել են ամանորյա գույների խորհուրդներով:

Հնչել են բանաստեղծություններ, բարեմաղթանքներ, երգեր, ներկայացվել փոքրիկ բեմականացումներ:

Հանդեսի մտահղացումը և կազմակերպական մասը դասվար Ռիմա Չոբանյանինն էր:

Հանդեսի խորհրդավոր և ամենասպասված հյուրը Ձմեռ պապն էր՝ նվերներով լի պարկով ու անակնկալներով: Նա երգ ու պարով ուրախացրեց երեխաներին և վերջում, նվերները բաժանելով, բարեմաղթեց. «Թող Նոր տարին բարի լինի բոլորիս համար, լինի նորամուր ձեռքբերումների ու հաջողությունների, անկատար ծրագրերի ու նվիրական իրձերի իրականացման, խաղաղության, երջանկության և բարեկեցության տարի»:

Շնորհակալանքի և գոհունակության խոսք ասացին դասարանի ծնողները, դասավարդ, դպրոցի տնօրենը:

Արմինե ՄՈՒՍԱԶԵԼՅԱՆ Շնող



2019/12/24 18:48



ԸՆԹԱՅՔ

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉԻԿՈՐԸ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԵՎ ՈԱՉՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԿԱՏԱՐԵԼԻՄ



դեր ու նշանակություն ունի հակառակորդի մասին տեղեկություններ հավաքելը նրանց գործողությունների բնույթի մասին՝ զինղեկն ասաց, որ հնարավոր հարձակման ուղղությունն իմանալը կատարվում է դիտարկման միջոցով: Դիտորդ՝ նշանակում է լավ պատրաստված զինվոր կամ զինվորների խումբ, որն ունի դիմացկունություն, սառնասրտություն, համբերատարություն և մարտի ժամանակ ցուցաբերում է վճռականություն ու տոկունություն: Դիտորդը, ստանալով հրամանատարի մարտական հրամանը, պարզում է կողմնորոշիչները, հակառակորդի գործողությունների բնույթը:

Զինղեկ Գարեգին Չարունյանն ունի ութ տարվա աշխատանքային փորձ, որից վեցը՝ Արմավանի անվան կրթօջախում: Աշխատանքային գործունեության ընթացքում գրանցել է մի շարք հաջողություններ: Ս.թ. ապրիլին անցկացված «Արծվիկ» ռազմամարզական մրցումների շրջանային փուլում դպրոցի թիմը գրավել է 1-ին պատվավոր տեղը, հանրապետական փուլում զբաղեցրել է միջին տեղը: Դպրոցի թիմը մասնակցել է հնգամարտի մրցումներին. աշակերտներն ունեն անհատական պարգևատրումներ:

Նախորդ ուսումնական տարում՝ ապրիլին, դպրոցի հավաքական թիմը հրաձգությունից հավաքել է բարձր միավորներ, նույնը արել են Իվանյանի ուսումնական հրաձգարանում:

Գ. Չարունյանը իր աշակերտներին լավագույնս պատրաստում է առարկայական օլիմպիադային՝ գրանցելով հաջողություններ: Նրա աշակերտուհի Աշխեն Ասրյանը ԿԳՍՆ-ի կողմից արժանացել է պատվոգրի և միայն առողջական վիճակի պատճառով չի մասնակցել օլիմպիադայի հայաստանյան փուլին:

Ամեն տարի մարտի 1-ին՝ Քաղաքաշտպանության միջազգային օրը, կազմակերպում և բարձր մակարդակով անցկացնում է դպրոցի համապատասխան միջոցառումը, և դպրոցականները ցուցադրում են արտակարգ իրավիճակներում ճիշտ և ժամանակին գործելու բազմաթիվ հմարքներ:

Գ. Չարունյանը բարեխիղճ ուսուցիչ է, ջանասիրաբար մասնակցում է ուսումնական գործընթացներին: Մասնակցել է որակավորման դասընթացներին, դասակի հրամանատարների հավաքին, որտեղ աչքի է

ընկել սպայակազմի կողմից, զորամասի հրամանատարի կողմից արժանացել է ուշադրության: Դպրոցում հանդես է եկել հայրենասիրական զեկուցումներով, կազմակերպել բաց դաս 2017թ. փնջային մեթոդիավորման աշխատանքների ժամանակ:

Բարեխիղճությամբ օժտված ուսուցիչը, լինելով մանկավարժի զավակ (հայրը՝ Վլադիմիր Չարունյանը, պատմության վաստակաշատ ուսուցիչ է. պաշտոնավարել է մեր կրթօջախում ուսմասվարի, Մուրացանի անվան դպրոցում՝ տնօրենի պաշտոններում) բարեխիղճ է և հայրենասիրական պարտքը կատարելիս. մասնակցել է ապրիլյան պատերազմին:

Պատմում է, որ եղբայրներով նստած էին տանը. ապրիլի 2-ին հեռուստացույցով հաղորդում են, որ դիվերսիա է կազմակերպվել թշնամու կողմից: Ապրիլի 3-ի գիշերը ժամը 2-ի կողմերը հայտարարվել է զորահավաք: Շրջանի զինղեկները ներկայացել են զինկոմիսարիատ, որտեղից էլ՝ պահանջվող մարտական դիրքերը Մարտակերտում: Շուրջ ամիսուկես՝ մինչև ապրիլի 22-ը, մնացել են Ն զորամասի դիրքերում:

Կրակում էին թշնամու «Գրադ» կայաններից: Թշնամու ակտիվությունը մարտի 2-ի միայն մարտի վերջերի: Ապրիլի 2-6-ը բռնկված կատաղի մարտերն ուժեղացել են նաև ապրիլի 22-25-ի ժամանակահատվածում: Խփում էին հրաձգային զենքերով, սկանալետներով: Զինվորների մարտական ոգին շատ բարձր էր, արդյունքն էլ եղավ այն, որ հերոսությամբ և անձնագոհությամբ պաշտպանվեց հայրենիքը:

Ինչ ուսուցանում է հայրենիքի զինվորը, այն էլ ապացուցում է գործնականորեն, որի համար Գ.Չարունյանը ապրիլյան պատերազմին ակտիվորեն մասնակցելու և իր հայրենասիրական պարտքը կատարելու համար պարգևատրվել է «Մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցելու համար» մեդալով:

Այս տարվա դեկտեմբերի 1-8-ը Գ.Չարունյանը մասնակցել է ՊԲ-ի կողմից անցկացված զորահավաքին և վերադարձել պատվոգրով՝ շնորհված զորամասի հրամանատարի կողմից զորահավաքին ակտիվորեն մասնակցելու և բարձր ցուցանիշներ ցուցաբերելու համար:

Վարդիթեր ՉԱԿՈՒՅԱՆ

# ԱՆՎԱՆԸ ԴԱՎԱՏԱՐԻՄ

Մարտունու Նելսոն Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ հոսքային դպրոցը շրջանային և հանրապետական տարբեր թիմային մրցույթներում հանդես է գալիս խորհրդանշական «Մոնթեաբերդ» անվամբ: Տնօրեն Կարինե Պողոսյանն այսպես է ասում. «Ինչպես Մոնթե Մելքոնյանի շնորհիվ Մարտունին դարձել էր անառիկ ու անպարտելի, այնպես էլ լեգենդար հրամանատարի անունը կրող թիմն է անպարտելի»: 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում դպրոցը հասցրել է արձանագրել լուրջ հաջողություններ:

Արդեն երրորդ տարին է, ինչ դպրոցի թիմը մասնակցում է Պատանի քիմիկոսների



համահայկական մրցաշարին: Նոյեմբերի 30-ին Երևանում կայացած մրցույթի բառորդ եզրափակիչ փուլում քիմիայի ուսուցչուհի Կարինե Կարապետյանի ղեկավարած «Մոնթեաբերդ» թիմը հանդես է եկել հետևյալ կազմով. Մարիամ Չարունյան, Աստղիկ Գրիգորյան, Գևորգ Ավանեսյան, Լիա Գրիգորյան: Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարը փոխներգործուն (ինտերակտիվ) խաղի սկզբունքով իրականացվող մրցույթ է, որում 9-12-րդ դասարանների աշակերտները լուծում են քիմիայի բարդ առաջադրանքներ, բանավիճում գիտական թեմաների շուրջ և ներկայացնում իրենց հետազոտությունների արդյունքները: Մրցույթը հնարավորություն է տալիս բարձր դասարանների աշակերտներին ամբողջ թիմով փնտրել և գտնել լուծումները այնպիսի հարցադրումների, որոնք պահի դրությամբ գուցե դեռ լուծում չունեն: Մրցույթի բառորդ եզրափակիչում Չարունյանի ու Արցախի դպրոցականներից կազմված 42 թիմերի միջև ընթացած թեժ պայքարի արդյունքում «Մոնթեաբերդ» թիմի անդամները, կատարելով բարդ ու հետաքրքիր առաջադրանքներ, հնարավորություն ստացան մասնակցելու մրցույթի կիսաեզրափակիչ փուլին: Բավականին լուրջ արդյունքներ ցուցաբերած թիմը կիսաեզրափակիչ փուլ անցած 17 թիմերի շարքում զբաղեցնում է 6-րդ հորիզոնականը: Քանի որ խաղը կայացել է նոյեմբեր ամսում, ուստի մոնթեականներն իրենց հաղթանակը նվիրեցին լեգենդար հրամանատարի հիշատակին և խոստացան զենքով կրած հաղթանակի դրոշմ բարձր պահել նաև կրթության ասպարեզում: Կ.Պողոսյանը հպարտությամբ է

նշում, որ թիմի հաջողությունը ոչ միայն պատիվ է բերում դպրոցին, այլ նաև ամբողջ Արցախին և հավելում, որ Կ.Կարապետյանն ու թիմի անդամներն ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ են պատրաստվում 2020-ի գարնանը կայանալիք մրցույթի կիսաեզրափակիչ փուլին: Քառորդ եզրափակիչում արձանագրած հաջողությունների համար պատանի քիմիկոսները «Այբ» կրթական հիմնադրամի կողմից պարգևատրվել են հավաստագրով:

Արժևորելով նմանատիպ մրցույթների կարևորությունն ուսումնական գործընթացում՝ կրթօջախի տնօրենը ներկայացրեց վերջերս Արցախի պատմաերկրագիտա-

կան թանգարանի կողմից կազմակերպված «Արցախի պատմությունը և մշակույթը: Աշխարհի թանգարանները» խորագրով խաղ-մրցույթի արդյունքները: Դպրոցի պատմության ուսուցչուհի Լարիսա Խաչատրյանի ղեկավարած «Մոնթեաբերդ» թիմը երեք փուլով կայացած խաղի ընթացքում 36 հնարավորից վաստակել է 32 միա-

վոր և զբաղեցրել պատվավոր առաջին տեղը: Կազմակերպիչների կողմից թիմը պարգևատրվել է զավթով և պատվոգրով, իսկ անդամները՝ գրքերով:

Դպրոցի սաները ետ չեն մնում նաև մարզական միջոցառումներում: Բարերար Աշոտ Զիվանյանի հովանավորությամբ



կազմակերպվող՝ Մոնթե Մելքոնյանի ծննդյան հերթական տարեդարձին նվիրված ամենամյա ֆուտբոլի առաջնության արդյունքում գավաթը կրկին հ.1 դպրոցի սաների ձեռքում է:

«Արձանագրած հաջողությունները տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք են: Մեր յուրաքանչյուր աշակերտի հաղթանակ բոլորիս հաղթանակն է», - հպարտությամբ ասում է Կ.Պողոսյանը և ընդգծում, որ ուսուցիչ-աշակերտ ամուր կապի արդյունքը միշտ հաջողություն է բերում:

Գիտելիքն ուժ է, և այդ ուժը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտի իրագործելու այն նպատակներն ու ցանկությունները, որոնք դրել է իր առջև:

Հաջողություն մաղթենք մեր դպրոցականներին առաջիկայում ավելի մեծ ձեռքբերումներ ունենալու համար:

Անուշ ԱՍԻԲԱԲԱՅԱՆ

ՀՈՎԿ. ԹՈՒՄԱՆՅԱՆ-150

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄՈՒՄԱՆ



Տարին թունանյանական է, և կարծում ենք հետաքրքիր կլինի ճանաչել հայ հանճարի հետ իր կյանքը կապած և նրան 10 երեխա պարզապես հայուհուն՝ Օլգա Մաճկալյան-Թունանյանին։ Փորձենք ըստ նրա և ժամանակակիցների, առավելապես թռուռուհու՝ Իրմա Սաֆրազբեկյանի հուշերի, ստեղծել դիմանկարը նշանավոր այդ հայուհու, ով եղել է բանաստեղծի սերը, մուսան, նրա գործերի առաջին ընթերցողն ու հոգեկից ընկերը։ Նա գիտեր՝ իր կողքին ապրում է մի արտասովոր մարդ, բանաստեղծ, ում ճակատագիրը նախասահմանել էր դանդաղ հայ ժողովրդի հպարտությունը։

Վրաստանից նրա ամուսնուհի Մարիամը 1888թ. մարտի 24-ին նրանց նշանեցին։ Դստեղից որդու պակասությունը ժամանեց Դստեղից հայրը՝ Դստեղ եկեղեցու քահանա Տեր-Թադևոսը իր ընկերների հետ. պակասությունը ներկա էին չորս քահանա և մեկ վարդապետ։ Դարձանք ժամանակ, 1888թ. դեկտեմբերի մեկին, Սուրբ Գևորգ եկեղեցուն հայրն ինքը կատարեց իր 19-ամյա որդու և 17-ամյա Օլգայի պակաս կարգը, որն այդ օրից ընդունեց անուսնու ազգանունը՝ Թունանյան։

Անուսնությունից հետո Թունանյանը տեղափոխվեց այն տունը, որտեղ ապրում էր Օլգան մոր և Տերտերի հետ, Նորաշենի 18 հասցեում։ Այնտեղ նրանք ապրեցին 6 տարի մինչև 1894 թվականը։ 1890թ. Մոսկվայում լույս տեսավ Թունանյանի ստեղծագործությունների առաջին հատորը։ Օլգան շատ վաղ հասկացավ, որ իր կողքին բացառիկ մի անհատ է. նա բոլորից վաղ հաղորդակցվեց նրա պոեզիային ու սիրեց այն։ Եվ երբ ինչ-որ մեկն ասում էր, թե այդպիսի բնության գրկում ապրող չէր կարող բանաստեղծ չլուսնալ, նա խիստ վրդովվում էր և անմիջապես պատասխանում, որ շատերն են ապրել այդ նույն Լոռիում, բայց այդպես էլ բանաստեղծ չեն դարձել։ Սա ասում էր նաև իր ծերության շրջանում՝ ասես պաշտպանելով իր պոետի փառքը։ Շատ հուզիչ էր նրանց անակագրությունը՝ լի անասնոցի սիրով, միմյանց ու ընտանիքի հանդեպ հոգատարությամբ։

Թիֆլիսի Բեյբության 44 հասցեում գտնվող հինգհարկանի շենքի վերին հարկը զբաղեցրած Թունանյանների տունը ժամանակի հայ ամբողջականության հավաքատեղի էր։ Բանաստեղծի առանձնահատկությունը, որը հայտնի էր «Վերնատուն» անվամբ, այդպես էր կոչվում ոչ միայն նրա համար, որ գտնվում էր 5-րդ հարկում, այլև այն պատճառով, որ այնտեղ հավաքվում էին բոլորը։ Ի դեպ, Ստ. Մալխասյանի բառերով՝ Ի դեպ, Ստ. Մալխասյանի բառերով՝ Ի դեպ, Ստ. Մալխասյանի բառերով՝ Ի դեպ, Ստ. Մալխասյանի բառերով՝ Ի դեպ, Ստ. Մալխասյանի բառերով։

Օլգա Մաճկալյանը ծնվել է 1871թ. դեկտեմբերի 22-ին, նյութապես պահով ընտանիքում։ Երեք տարի ուսանել է Նորաշենի դպրոցում, իսկ 1885 թ.-ից՝ Դոնսկայան դպրոցում։ Օլգայի մայրը՝ Շուշանիկ Մաճկալյանը, երկրորդ անգամ ամուսնացել էր Վրաստանի հայոց կոնսիստորիայի անդամ, քահանա Դավիթ Մարտիրոսյանի հետ, որը դասավանդում էր իզական գիմնազիայում և ժամանակի կրթված անձնավորություններից էր։ Թունանյանի ընտանիքում բոլորը սիրում ու հարգում էին նրան և կոչում էին պարզապես Տերտեր։ Շուշանիկի հետ համատեղ կյանքում նրանք երեխա չունեցան, և Օլգան ու իր 10 երեխաները դարձան նաև Տերտերի կյանքի մի մասը։ 1887-ին, երբ 18-ամյա Թունանյանը աշխատանքի ընդունվեց նույն կոնսիստորիայում որպես գրագիր, Տերտերի աչքից չվրիպեցին բարեկիրք ու գրագետ երիտասարդի ունակությունները, և որոշեց նրան ծանոթացնել իր խորք դասերի հետ։ Նա երիտասարդի միջոցով հաճախ էր տուն ուղարկում զանազան փաստաթղթեր՝ հուսալով, որ կծանոթանան, հետո նաև կանուսնանան։ Բացի այդ, մի թաքուն երազանք էր փայփայում հոգու խորքում. նա երազում էր Դավիթնեյի քահանա ձեռնադրել, բայց Թունանյանի համար նախախնամությունն այլ ուղի էր կանխորոշել։

Տերտերի ջանքերը զուր չանցան, հատկապես որ մինչև նրանց տուն գնալը Օլգան ու Դավիթնեյն ավելի վաղ հանդիպել էին։ Առաջին հանդիպումը պատահական էր՝ փողոցում, բայց երիտասարդը մեծ տպավորություն էր թողել աղջկա վրա։ Հետագայում, երբ նա պատմում էր այդ հանդիպման մասին, պարզվում է, որ սիրուն նախորդող համակարգը ծնվել է հենց այդ պահին։ Օլգայի խոսքով՝ պատահի Թունանյանը բարձրահասակ էր, նիհարավուն, սև գանգուր մազերով, երկնագույն պիջակի տակից երևում էր սև վերնաշապիկը։ Այստեղ հավելենք, որ հազուստի հանդեպ նախանձախնդրությունը բանաստեղծը պահեց ողջ կյանքի ընթացքում՝ սև պիջակ փողկապով ու գրպանում թաշկինակ։

1888թ. հունվարին, երբ Դոնսկայանը եկավ նրանց տուն՝ շնորհավորելու Նոր տարին, երիտասարդներն արդեն ծանոթ էին և թաքուն հայացքներ էին փոխանա-

լիսից։ Իրարընկալվում էին՝ այնտեղ վայելելով ջերմություն ու հարմարավետություն, իսկ հեռանալով՝ ջերմ մասնակներ էին գրում Օլենկային։

Թռուռուհու՝ Իրմա Սաֆրազբեկյանի հուշերում կարդում ենք. «30 տարեկանում Թունանյանն արդեն ամբողջովին ճերմակած էր, իսկ տատն իր 90 տարեկան հասակում միայն թեթև ճերմակներ ուներ։ Երբեմն Թունանյանը, երբ Օլգային ներկայացնում էր հյուրերին, ասում էր. «Ծանոթացեք, իմ երկրորդ կինն է»։ Եվ ավելացնում էր. «...Որ էսքան ջախել է երևում, լրիվ իմ շնորհքն է»։ Օլգան իր ամուսնու ստեղծագործությունների առաջին ունկնդիրն էր, շատերն անգիր էր հիշում, գիտեր ու սիրում էր նաև ժամանակակից բանաստեղծներին։ Պահպանվել է գրառումների այն տետրը, որտեղ նա նշումներ էր անում իր կարգացած գրքերի մասին, և որոնք պահպանվել են նրա անձնական գրադարանում։ Հակառակ իր գրավածությունը, երբ շարունակ հյուրեր պիտի ընդուներ, Օլգան հասցնում էր ամուսնու հետ ներկա գտնվել ներկայացումների, տարբեր երեկոների»։ Հատկանշական է, որ բանաստեղծը գրքեր էր նվիրում ոչ միայն իր երեխաներին, այլև իր սիրելի կնոջը։ Առաջին նվերներից էին Գոմեթրոսի «Իլիական» ու «Ոդիսականը», որոնք նա խնամքով պահում էր իր անձնական գրադարանում։

Բազմանդամ ընտանիքն ապրում էր հաշտ ու խաղաղ կյանքով՝ շնորհիվ Օլգա Թունանյանի և իհարկե՝ բանաստեղծի։ Տանը չգրված օրերն էր, որ մեծից փոքր բոլոր երեխաները հյուրերի հետ նստում էին նույն սեղանի շուրջը, դեռ ավելին, իրավունք ունեին մասնակցելու հյուրերի զրույցին, այս կամ այն հարցի քննարկմանը։ Լեռն միշտ շեշտում էր Օլգայի համբերատարությունը ու հավասարակշիռ պահվածքը, սեղանը զբեղում, առանց տրտնջալու այդքան հյուրեր ընդունելու և ճանապարհելու բացառիկ ունակությունը։ Լեռն ու ընկերները Օլգային կատարելով «նահատակ» էին անվանում, իսկ Թունանյանին՝ «ընտանեկան աղետ»։ Այս առումով շատ հանրահայտ է խաչի պատմությունը։ Մի անգամ տեսնելով խահանջում եռացող վիթխարի կաթան՝ Թունանյանին օժտեցել է, թե խաչ են եփում (այնինչ կաթսայում լվացքն են եռացրել)։ Նա անմիջապես սկսել է խաչի հրավերներ ուղարկել։ Աստիճանաբար հյուրերը սկսել են հավաքվել, և երբ նրանք հավաքվել են, տանտիրուկին հետաքրքրվել է, թե ինչ առիթով են եկել։ Նրանք պատասխանել են, որ խաչի են հրավիրվել։ «Ի՞նչ խաչ, - գարնացել է տիկին Օլգան,- մենք էսօր իսկի ճաշ չունենանք»։ Իրարին անգուստ ծիծաղից տունը թնդում էր, սակայն նրանք չեն ցրվել։ Հապտապ մի բան են պատրաստել, սեղանը բացել, և երեկոն կայացել է։

Թունանյանի տանը զանազան տոնակատարություններ էին կազմակերպվում, նշվում էին տարեդարձներ, բենադրվում ներկայացումներ. մի խոսքով, դա ուրախ ու աղմկուտ տուն էր՝ լի ծիծաղով ու աշխույժով։

Հատված Իրմա Սաֆրազբեկյանի հուշերից. «Տատս երբեք ամուսնուն չէր հանդիմանում նրա շաշույթյան համար։ Եվ չնայած ընտանիքը միշտ էլ սուղ էր ապրում, բայց հետագայում էլ, անգամ երբ արդեն Թունանյանը չկար, նա հուսով էր այդ մասին խոսում ու չէր մեղադրում նրան։ Դեպքեր էին լինում, երբ ապրում էին պարտքով, բայց Թունանյանը գրքեր էր գնում ու թանկարժեք իրեր, փող էր բաժանում կարիքավոր զրոհներին, իսկ երբեմն էլ տուն բերում հասարակ մարդկանց, կերակրում նրանց, լսում նրանց դժգոհություններն ու խնդիրքը։

Տատիս պատմելով՝ մի օր նա տուն է բերում մի ընկույզ վաճառողի։ Մի քանի ընկույզ կտրելով՝ տատն համոզվում է, որ բոլորն էլ փուլ են ու ոչ պիտանի։ Այն հարցին, թե ամուսինը գնելիս փորձել է, արդյոք, Թունանյանը պատասխանել է, որ անշուշտ փորձել է, սակայն փուլներն արդեն ջարդել են և մնացել են լավերը։ Իսկ հետո թախիծով հավելել է, որ չափից ավելի խեղճ էր այդ գյուղացին, ինքը խղճացել է և գնել ողջ պարկը։ Տատս մեզ միշտ սովորեցնում էր երբեք չչլաթաբեկ ամուսնուն գնումների համար, եթե այն նույնիսկ պիտանի չէ տան համար, պետք է ընդունենք այն ժպիտով ու հասկանալով, թե չէ նա այլևս ոչինչ չի գնի։ Եվ մենք այդ խրատը

յուրացրինք՝ անեն ինչ ընդունել հուսովով»։

Տիկին Օլգան, անշուշտ, նեղվում էր, որ տանը միշտ փողի պակաս էր զգացվում, բայց երբեք չէր տրտնջում կամ ամուսնուն հանդիմանում։ Մի տարի մեծ անհամբերությանը պատասխանելով Զատիկի տոներին. բանաստեղծը պիտի հոնորար ստանար Բաքվից՝ 350 ռուբլի, որն այն ժամանակների համար կարգին գումար էր։ Մինչ կինը ուրախ-ուրախ մտածում էր, թե ինչպես է ծայրը ծայրին հասցնելու, Թունանյանը տուն եկավ՝ ամբողջ գումարը ծախսած, մի կապ գրքերով ու ընտիր մրգերով և խնդրեց, որ տնեցիները վճարեն կառավարին։ Պարզվեց, որ նա մինչև վերջին կոպեկը ծախսել էր, բայց դժգոհության ու հանդիմանանքի ոչ մի խոսք կնոջից։ Մի ուրիշ անգամ նա ստացել էր 30 հազար ռուբլի հոնորար։ Եվ սովորականի պես բաժանեց երեք հավասար մասի. 10-ը երկրաշարժից տուժած երեխաներին, 10-ը՝ Ռուսաստանի սովյալներին, իսկ մնացած 10-ը՝ վանեցի փախստականներին։ Գրքերի տպագրությունից ստացած հոնորարներն անգամ ի գործ ունեցնում էր ֆինանսական վիճակ ապահովել ընտանիքում։ Երբեմն նաև հուսահատ վիճակներ էլ էին լինում, բայց Օլենկան հասկանում էր իր պոետին ու ներում նրան։ Իր աղջիկներին ու թռուռուհիներին տատը կատակով խրատում էր, որ տանտիրուհին պիտի խնայող լինի, միշտ պետք է մի պահուստ ունենա անսպասելի հյուրերի համար։ «Կնոջ մի ձեռքը միշտ պիտի գող լինի», - ասում էր նա։ Թունանյանի սեղանին միշտ ընտիր կերակուրներ էին մատուցվում հյուրերի համար, իսկ թե ինչ էր կերել այդ օրը ընտանիքը, ոչ ոք չէր իմանում։ Նա ջանում էր ամուսնուն հեռու պահել առտնին հոգեւերից։

1908թ. դեկտեմբերին շատ գրողների ու մշակույթի գործիչների հետ ցարական պահնորդական բաժանմունքի կողմից ձերբակալվեցին և Մետեխի բանտում հայտնվեցին Թունանյանն ու ավագ որդին՝ Մուշեղը։ Զարեցիկ անվաճ գրակառույթյան և արվեստի թանգարանում պահպանվել են Օլգա Թունանյանի՝ ամուսնու բանտարկության առիթով գրված տարբեր դիմումներն ու խնդրագրերը Թիֆլիսի անհասգային ժողովրդական վարչության պետին, Նախարարների խորհրդի նախագահին և ներքին գործերի նախարարին, Թիֆլիսի դատական պալատի նախագահին։ Զանազան իրավասու մարմիններին ուղղված իր անակնկարներն ու ջանքերն էր ապագուցել ամուսնու և որդու անմեղությունը, ազատել տալ նրանց բանտից։

Թունանյանի մահից հետո երեխաների և ամուսնու թողած ժառանգության ողջ պատասխանատվությունը մնաց կնոջ ուսերին։ Նա իր մեջ ուժ գտավ, համախմբեց երեխաներին իր շուրջը, նրանք համար հեռարան դարձավ՝ պահպանելով ընտանիքի արժանապատվությունը։ Կուսակցական վիթխարի պարտքերը, դուստրերի կրթության հոգեւերը, ամուսնու ձեռագրերի վրա աշխատանքը, իսկ հետագայում նաև որդիներին կրթությունը, թվում է, թե պիտի տապալեին նրան, բայց նա լռելյայն, մինչև կյանքի վերջը կրեց իր խաչը՝ պահպանելով իր անսովոր բարությունն ու կանացի գարնամալի դիմացկունությունը։ Հետաքրքիր է, որ ամուսնու մահից հետո նա երբեք նրան չասաց Դոնսկայան, ինչպես իր երեխաները, նա ասում էր Չայրիկ՝ այդ բառի մեջ ընկելով յուրահատուկ սեր ու հավատարմություն։

1969 թվականին մեծ շուքով նշվեց բանաստեղծի 100-ամյակը։ Հրեթյանական հանդիսությունների կիզակետը բնականաբար երևանում գտնվող Թունանյանի թանգարանն էր։ Տոնական միջոցառումներն ու հանդիսավոր երեկոներ կազմակերպվեցին ոչ միայն Հայաստանում ու Վրաստանում, այլև Լեհիզգրադում, Կիևում, Մոսկվայում։ Թունանյանի հրեթյանից երկու տարի անց, 99 տարեկան հասակում, ամուսնու մահից 48 տարի հետո կյանքին հրաժեշտ տվեց Օլգա Թունանյանը։ Վերջին օրերին նա անկողնուց վեր չէր կենում, բժիշկների խոսքով՝ նա մոռնի պես հանգավ՝ առանց որևէ հիվանդության։ Իսկ ընտանիքի այսպես էր սփոփում. «Ես հո խաչքար չեմ, որ հավերժ ապրեմ»։ Նա լուռ հեռացավ կյանքից 1971թ. փետրվարի 2-ին՝ մի ցուրտ ծյունախառն առավոտ...

Պարտապետ Մելանյա ՄԻՆՈՅԱՆԸ



ԲԱՆԷ ՄԵՃԱՏ

ՀԱՅՈՑ ՄԵՃԵՐԻ ԱՄԱՆՈՐԻ ԽՈՍՔԸ

Հայոց մեծերի համար Ամանորի տոնը միշտ էլ մի գեղեցիկ առիթ է եղել նորից խոսելու հարազատ ժողովրդի հետ, իմաստավորելու կյանքը, խորհրդածելու անցած եւ գալիք ճանապարհների շուրջ: Եվ ծնվել են խոսքեր, գրվել տողեր, որոնք այսօր էլ հնչում են նույն իմաստություններով՝ ճանաչել տալով ոչ միայն մեծերին, այլև ինքներս մեզ:

Հետաքրքիր է, ի՞նչ են մտածել, ինչպե՞ս են Ամանորը տեսել մեր մեծերը երկրի, ժողովրդի եւ իրենց իսկ կյանքի տարբեր ժամանակահատվածներում:



ՌԱՄ ԳԱՐԻԲՅԱՆ

Նոր տարի է գալիս: Ուզում եմ շնորհավորանքի խոսքեր գտնել իմ տոհմ ու տակի ավագների եւ կրտսերների համար, իմ ազգի բոլոր մեծերի ու փոքրերի համար:

Ուզում եմ հետ նայել, հետ գնալ, վերապրել անցածը, մեկ տարվա անցածը: Ուզում եմ շնորհակալության ու շնորհավորանքի խոսքեր գտնել իմ ժողովրդի փետրվարյան խիստ ու խելոք ընդվզումների համար, դարավոր ստրկության վախից ձերբազատվելու նրա աստեղային ժամի համար, ազգային գարթոնքի, միահամուռ կամքի, միասնության եւ միաբանության նրա աստեղային ժամի համար, իր ինքնաճանաչման գիտակցությունը դարի ճակատին արձանագրելու համար, իր երգաչեն վաստակի եւ երգանվեր ոգու համար, կորցրածը ետ բերելու իր առաջին հանդուգն փորձի համար:

Մենք տոկալու եւ ապրելու ենք, քանի աշխարհը կա, քանի աշխարհում մարդկություն կա եւ մարդկության մեջ՝ մարդկայնություն:

Այս հավատով էլ ոտք դնենք Նոր տարվա շեմին եւ բոլոր սրտով բոլորին մաղթենք՝ շնորհավոր Նոր տարի:

1988թ. դեկտեմբերի 31

Նոր տարի է գալիս: Դառնանք ու մաղթենք, որ այս տարին իրենց տուն ու տեղից քշված հայերի համար գաղթականության վերջին տարին լինի, որ նրանք իրենց հող դարձած պապերի հողի վրա տիրաբար քայլեն, ծաղկեցնեն այդ հողը եւ ապահովեն իրենց սերունդների ծաղկումը: Նոր տարի է բացվում, բարով է բացվում ու բացվում է բարի:

1989թ. դեկտեմբերի 31

Նոր տարի է գալիս: Ոչ մի օրհաս, ոչ մի հոգեվարք, ոչ մի կործանում, մենք նոր ենք կայանում որպես ազգ ու պետություն, այդ կայանալու կենցաղ մաղթենք:

1992թ. դեկտեմբերի 30

ԱԿԵՏԻԲ ԻՍԱՀԱԿՅԱՆ



...Հնչեց 12 ժամը: Հին տարին գնաց, մեռավ անհունի մեջ, նորն սկսվեց:

Լուսամուտը բացել, նայում եմ: Լուսնյակ գիշեր, լիալուսին, թեթև, կապույտ ամպեր: Լսում եմ... գնացքը գնում է՝ սուլելով... Հանկարծ նավերի շակները սուլում են, սուլում են, սուլում են... Հրացաններ են արձակում, անթիվ... Հեռվից՝ մարդկանց ձայներ, երգեր, ծիծաղներ...

15 վայրկյան...

Պառնել, վերհիշում եմ բոլոր Նոր տարիները, որ դիմավորել եմ, ի՞նչ կերպ, ի՞նչ սրտով, ո՞ր, ինչպե՞ս...

Սուլում են նավերը, մեկը՝ կտրում, մյուսը՝ սկսում...

Մարդկությունն ուրախանում է... ինչո՞ւ, ի՞նչ հույսեր է սպասում, երբ դժգոհ հնից՝ դիմում է անծանոթին... մահին, վերջին, ապագային, որի ծոցում ո՞վ գիտե ինչ դաշույններ կան... Գուցե մեզինց ոմանք չեն հասնելու մյուս տարուն, եւ շատերս չենք հասնելու անշուշտ, բայց ուրախանում ենք... Ի՞նչ բնագղ է...

926թ. դեկտեմբերի 31,

Վենետիկ («Հիշատակարան»-ից)


Նոր տարվա առիթով ցանկանում եմ, որ մեր զոհված մարտիկների եւ կենդանի մնացածների արդար փափագները՝ թշնամու ոչնչացումը, արագ կատարվի:

Ցանկանում եմ մեր քաջարի զինվորներին աննկուն հավատ եւ համոզմունք վերջնական հաղթանակի հանդեպ:

Բարեմաղթում եմ ավելի տոկունություն, կորով եւ խիզախություն:

Համոզված եմ, որ շուտով մեր հերոսական եղբայրների արյունով ազատագրված հողերի վրա նորից կծավալվի ընդհատված խաղաղ եւ ստեղծագործ աշխատանքը:

1942թ. հունվարի 1, Երևան



ՊՐՈՒԻՅՐ ՍԱԿ

Սիրելի՛ ազգակիցներ,

Երկրագնդի բոլոր միջօրեականներն ու հորիզոնականները անհայտենիք հայի ոտքերով հատած հեռավոր հարազատներ:

Գալիս է Նոր տարին, Կաղանդը, Ամանորը:

Գալիս է ու մեզ համար, որ ժողովուրդ ենք, բայց ժողովված չենք: Ուրեմն թող նա գա նախ և առաջ իբրև մեջքապնդող գոտի բոլորիդ համար՝ աշխարհագրական որ գոտիներում էլ լինենք:


Թող բոլորիս աչքերն էլ պայծառանան Նոր տարուն, և ճանապարհները կրճատվեն, և սպասելիքները մոտենան:

Բարին է առաջնորդել մեզ հազարամյակներ շարունակ: Մեր տվածի գեթ մի մասը պիտի որ մեզ վերադարձնի բախտ կոչվածը, որքան էլ հույսբար ու ծուլբար քայլի:

Թող գալիք տարին արագացնի այդ քայլը, ու բարին հասնի բոլորիդ ու բոլորիս: Թող հայ մանուկներ շատ ծնվեն Նոր տարուն և ծնվեն ճակատի այլ գրով. կնունքը՝ որտեղ կուզի, բայց նրանց հարսանյաց հանդեսը կատարվի մեր Մայր հայրենիքում, ստորոտներում այն լեռների, ափունքներում այն լճերի ու գետերի, որոնց անունն արտասանելիս դողում են մեր շուրթերը, և փշաքաղվում է մեր մաշկը...


1963 թ. դեկտեմբերի 31-ին սփյուռքահայության համար եթեր հեռարձակված շնորհավորանքի խոսքից

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ



Հայ մարդը միշտ Նոր տարին դիմավորելիս գինու բաժակը առել է ձեռքը, շշմառել է՝ խաղաղություն և աշխարհին: Աշխարհում խաղաղությունը երկի ամենից շատ հայ ժողովրդին է պետք եկել: Դարեր շարունակ Արևելքի ու Արևմուտքի բախման քառուղիներում ընկած Հայաստանում ասպատկվել է, ավերվել, բաժանվել հզորների միջև, բայց երբ հայ ժողովուրդը խաղաղության կարճատև պահեր է ունեցել, ստեղծագործել է, կերտել արվեստի հրաշքեր, մարդակային մշակույթն ու քաղաքակրթությունը հարստացրել յուր հոգու գեղեցկություններով:

1966 թվականի հունվարի 1



ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՅԱՆ

Հիմն տարին արդեն պատկանում է անցյալին: Լսվում են նոր տարվա ունաձայները: Գալիս է: Ահա իրար կհանդիպեն հինն ու նորը, որ հրաժեշտ տան իրար:

Չգիտես ո՞ր կողմը, որի՞ն նայես: Նայում ես գնացողին և ժպտում: Այդ ժպտի մեջ կա և երախտագիտություն, և քննադատական մտքեր, և ավստանք, և ներողամտություն: Նայում ես նրա կռացած մեջքին, տեսնում ես նրա խիռուն հայացքը և հասկանում ես նրան:

Նա խրատվել է, իմաստնացել է: Նա գիտե, թե ինչ է արել և ինչ է թողել պակաս: Կուզեր լրացնել, շտկել, այդ էլ անել: Բայց... արդեն ուշ է:

Անցածն անցել է: Պետք է գնալ:

\*\*\*

Իսկապես, ի՞նչ են հին տարին, նոր տարին: Չկա հին տարին, այդ արժաթափեր կրամեջք ծերունին: Չկա նոր տարին, այդ առույգ, ուրախ երեխան: Դրանք մեր պատկերացումներն են, մեր այլաբանությունը, մեր երևակայությունը: Մենք ենք հնարել ժամանակի չափերը: Մենք ենք շինում ժամացույցները: Մենք ենք չափողը, չափում ենք մեր շարժումները, քայլերը, վարմունքները, գործերը: Մենք մեզ ենք չափում: Մենք ենք հին տարին, մենք ենք նոր տարին: Մեր ձեռքն--- է մեր բախտը, մեր կյանքի տնօրինությունը, մեր իրականության ստեղծողները, մեր կյանքը փոխողները: Ձանձնք էլ ավելի լավ, էլ ավելի շատ, էլ ավելի գեղեցիկ փոխել, կառուցել մեր կյանքը, այնպես, ինչպես երազում ենք, կամենում ենք, ձեռնարկում ենք: «Նոր տարվա խոսքեր», 1956 թ., հունվարի 1

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ



Նոր տարվա հույսերը նման են Նոր տարվա տոնածառին, որոնք այս գիշեր լուսազարդվում են աշխարհի բոլոր տանիքների տակ: Ուզում եմ հազար սրտով ցանկանալ, որ այդ հույսերը Նոր տարվա տոնածառի նման մի երկու օր լույս տալով՝ դուրս չնետվեն կմախքացած:

ու մշակույթի տեսանկյունից: Ժամանակակից ամանորյա հյուրասիրությունն առանձնանում է մեղեդն կերակրատեսակների անմախաղեպ առատությանը ու բազմազանությանը. տարատեսակ մեղեդն նախուտեստներ, մսով տոլմա, խոզի ազդորամիս (բուրդ), քյուֆթայի տարբեր տեսակներ, կոտլետներ, մսով աղցաններ:

Նախկինում ամանորյա տոնակատարություններում գերիշխում էր նմանողական հմայության նկատմամբ հավատը, ուստի հայ ավանդապաշտ ընտանիքներում ձգտում էին տարվա առաջին օրն ունենալ առատ սեղան՝ տարվա ընթացքում ևս այն պահպանելու ակնկալիքով:

Ժամանակակից ամանորյա հյուրասիրության կազմակերպման հիմքում նույնպես կիրառվում է տարբերակիչը առատ մշակույթի և դրանով իսկ տարվա ընթացքը կամխաղաղակերպ և պայմանավորելու խորհուրդը: Առհասարակ ժամանակակից ամանորյա հյուրասիրությունը աչքի է ընկնում կազմակերպման հիմքում մի շարք կարևոր արժեքների՝ ամոթի, հեղինակության գերակայությամբ: Նշված արժեքների գերակա և կարևոր լինելը ստիպում է մարդկանց անկախ նյութական հնարավորու-

թյուններից ապահովել ուսելիքով առատ, ճոխ հյուրասիրություն: Անգամ հասարակական և սեփական ընկալումներով չունենող համարվող ընտանիքներում ամանորյա հյուրասիրությունը ևս ներկայացվում է Ամանորին հատուկ ուսեստի տեսակաճու գրեթե ողջ կազմով. «...պարտքով էլ լինի, ամում եմ, որ հարևաններից հետ չմնամ... խնամի ունեմ, բա իմ սեղանը առատ չլինի...»: Մարդիկ իրար են նայում, մրցակցության մեջ մտնում:

Սեփական եկամուտները գերազանցող ամանորյա հյուրասիրություն կազմակերպելու մյուս պատճառաբանությունը առնչվում է գեթ մեկ օր՝ տարվա առաջին օրը, տարբերակիչը առատ մշակույթի խորհուրդին. «...մի Նոր տարի ա, էդ մի օրն ա, ինչի՞ իմ երեխուս աչքը ուրիշի սեղանին լինի...»:

Ձևավորվել է ամանորյա ուսեստների տեսակաճու ընդունված ցանկը, որտեղ որոշակի կերակրատեսակների ու մթերքների առկայությունը դարձել է պարտադիր, իսկ դրանց բացակայությունը՝ հանրայնորեն անընդունելի:

Սոցիալական շերտավորումը տվյալ դեպքում ընդամենը ազդում է հյուրասիրության տեսակաճու բազ-

մազանության վրա: Առավել բարեկեցիկ ընտանիքներում պարտադիր տեսակաճուն ավելանում են յուրօրինակ մթերքներ ու կերակրատեսակներ, իսկ պարտադիր համարվող ուսեստների դեպքում ունեցվածքային դրությունն ընդամենը ազդում է դրանց որակի, գնի, քանակի վրա: Ժամանակակից կենցաղում փոխվել են առատության, ճոխության, լավ հյուրասիրության պատկերացումները: Ամանորյա հյուրասիրության կազմից դուրս են մղվում տոլմայի տեսակները, լոբու և ավելուկի աղցանները:

Ամանորը յուրահատուկ առիթ է՝ ի ցույց դնելու խոհարարական հմտությունները, տոնական սեղան պատրաստելու ճաշակը: Միաժամանակ ամանորյա հյուրասիրության և հյուրընկալության համատեքստում ձևավորվել է որոշակի վարվելակարգ, որն արդեն ավանդույթ է դառնում՝ տարեցտարի կրկնվելով: Հատուկ ձևավորվել են նորմեր ու կանոններ՝ ամանորյա շնորհավորական փոխայցելությունների, հյուրընկալությունների, առաջնահերթությունների, ժամկետների տևողության, հյուրի՝ տվյալ ընտանիքում ունեցած կարգավիճակով պայմանավորված: Չնայած Ամանորն ընկալվում է

մասնությունը տոնը մշում է տանը՝ ընտանիքի հետ: Խնջույքի համար պատրաստված շքեղ սեղանները հաճախ նպատակահիմն չեն ծառայում, քանի որ խնջույք այդպես էլ չի ստացվում, և Ամանորը մշելու համար պատրաստված համադրան խորտիկները մի քանի օր սեղանից «քոչում են» սառնարան, սառնարանից՝ սեղան, մինչև որ դրանց զգալի մասը հայտնվում է աղբարկղում:

Ամանորի գիշերվա ամենամեծ ծրագիրը հանրապետության ողջ տարածքում սփռվող հանրային հեռուստատեսության տոնական ծրագիրն է: Հանրայինի հետ մրցում են այլ հեռուստատեսություններ ևս: Հաճախ ստացվում է այնպես, որ տոնական խնջույքի ու գլավորձանալու փոխարեն մարդիկ դիտում են հեռուստահանդես: Իրականում նույնիսկ բոլորի կողմից ընդունված այս տոնահանդեսի հուսկան-զգայական շեշտները զգալիորեն թուլացել են: Ահա թե ինչու մեր իրականության մեջ Ամանորի տոնական մշակույթ ձևավորվում, և Նոր տարին որպես տոն ընկալում ու վայելում են առավելապես մեր երեխաներն ու թոռնիկները՝ զարդարված եղևնու, Ձմեռ պապի ու Չյունամուշի հայտնվելու հրաշքով:



ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ

ԻՆՉ ԿԼԻՆԵՐ, ԵԹԵ ՉԼԻՆԵՆ ԲԱՐԻ ՄԱՐԴԻԿ...

Բարեգործություն կատարող անհատն ու-
րույն հոգեկերտվածք ու մտածողություն է ու-
նենում, բոլորովին մի այլ փիլիսոփայությանը
է ընկալում աշխարհը: Բարեգործելը շնորհ է,
պարզ, որն ամեն մեկին է տրված. այն տր-
վում է շատ քչերին՝ բացառապես լուսավոր,
բարի և կամեցող մարդկանց:
Բարեգործները լուռ և անձայն են կատա-
րում իրենց առաքելությունները: Կարևորելով
իրենց գովաբան գործերը՝ նրանք երբեք չեն
ձգտում բարձրաձայն մեծարանքի արժանա-
նալ, այլ մեծ բավականություն են ստանում
գեթ մի բարի գործ կատարելով:
Այսօր ուզում եմ խոսել հայ բժիշկ Լևոն
Խաչատրյանի մասին, որի համար հայ մար-
դու կյանքը փրկելը գերազույն նպատակ է:
Մեծանուն բժշկի հետ ծանոթացանք բոլո-
րովին պատահական: Թոռնիկս՝ 8-ամյա Վա-
ղիմիրը, հիվանդացել էր, և երկար ժամանակ
չէին կարողանում օգնություն ստանալ նրա
հիվանդությունը, դրա պատճառները: Հարավոր
չէ ներկայացնել այն պարունակները, անորոշ
վի-
ճակը, որ ունեինք մենք: Անիրական էր թվում
ամեն ինչ, չգիտեինք արդեն ինչ անել, իսկ
փորձերը մեզ էր նայում իր անմեղ աչքերով և
հրաշքի սպասում:
Հայաստանի և Ռուսաստանի առաջատար
հիվանդանոցներում երկարատև և անօգուտ
բուժումներ ստանալուց հետո լրիվ հուսա-
հատված վերադարձանք տուն՝ այլևս չիմա-
նալով ինչ անել:
Ա՛հ առողջապահության նախարար Արա
Բաղդասարյանը, որը քաջատեղյակ էր մեր երեխա-
յի հիվանդության ողջ ընթացքին, համոզված էր
մեզ չնահանջել, այլ՝ պայքարել: Մեծահոգի

անձնավորությունը պատրաստ էր ընդառաջել
և օգնել, ինչով կարող էր:
Ամառվա կեսին առողջապահության նա-
խարարը տեղեկացրեց մեզ, որ Ֆրանսիայից
Արցախ է ժամանել հայտնի բժիշկ-սրտաբան
Լևոն Խաչատրյանը, և օրեր անց կազմակեր-
պեց մեր հանդիպումը: Հայտնի սրտաբանը
մանրամասն հետազոտեց երեխային և տվեց
իր եզրակացությունը, որն ասես սառը ցնցուղ
լինեց մեզ համար:
Թոռնիկս պետք է ենթարկվեր սրտի բարդ
վիրահատության, և այն պետք է իրականաց-
վեր միայն արտասահմանում: Մինչև մենք ու-
շ-
քի եկանք, բժիշկն արդեն մեկնել էր Ֆրան-
սիա՝ մեզ պատվիրելով գործել շատ արագ:
Արդեն ակնհայտ էր, որ թոռնիկս փրկու-
թյունն օտար եվրոպացի պետք է լիներ:
Ոչնչի առաջ կանգ չառնելով՝ աղջիկս և
թոռնիկս մեկնեցին Փարիզ: Բժիշկը նրանց դի-
մավորեց օդանավակայանում և իր հոգատա-
րությամբ, սրտացավությամբ ուժ հաղորդեց
աղջկա՝ նրանից պահանջելով երբեք չկորց-
նել հավատն ու հույսը: Բժիշկ Խաչատրյանը
չէր կարող անտարբեր անցնել ուրիշի ցավի
կողքով, աղջկա ու թոռնիկս տարավ իր
տուն, որտեղ Խաչատրյաններն արդեն սպա-
սում էին և ամենայն ջերմությամբ ընդունեցին
հյուրերին: Երրորդ ամիսն է, ինչ մերոնք ապ-
րում են նրանց տանը, այդ հյուրընկալ օջա-
խում ստեղծվել են բոլոր նպաստավոր պայ-
մանները, որպեսզի Վաղիմիրը ստանա լիար-
ժեք բուժում:
Այսօր մեզանից յուրաքանչյուրն իրեն
ամենամեծ ազգասերն ու հայրենասերն է հա-
մարում, և դա միանգամայն անկեղծ է, սա-

կայն ու ինչպես է այն ընկալում, ում մեջ այն
ինչ տեղ է զբաղեցնում, դժվար է գնահատել:
Չեմ սխալվի, եթե ազգասիրության և հայ-
րենասիրության տիպար և բարերար չանվա-
նեմ բժիշկ Լևոն Խաչատրյանին: Աճեցրելի է,
որ նա բնության օրենքներով ապրող մեր
նախնիներից ժառանգել է ամենավեճ արժա-
նիքները՝ չհեռանալ արմատներից, սատար և
նեցուկ լինել յուրաքանչյուր հայի:
Երևի Լևոն ամուսնը կրողները ծնվել են
աջակցելու, օգնելու, արարելու և սատարելու
համար:
Հիրավի, երկիր մոլորակը համայն մարդ-
կության տունն է, որտեղ բոլոր ազգերի մար-
դիկ պիտի գտնեն խաղաղ համակեցության
եզրեր, և դրա հիմքը կարող է լինել մեծ, հա-
մընդհանուր, համամարդկային և անպարագ-
ծելի սերը:
Մեր ընտանիքն այդ սերը տեսել է այս
ամիսների ընթացքում. ոչ ոք անտարբեր չի
անցել մեր կողքով և անպայման հարցրել է
փոքրիկ Վաղիմիրի որպիսության մասին,
առողջությունը մարդիկ և աղոթք հղել առ Աստ-
ված:
Ցանկանում եմ մեր խորին երախտագի-
տությունը հայտնել Լևոն Խաչատրյան հային,
լավ մարդուն, մկրտյալ բժշկին: Շնորհակալու-
թյուն եմք հայտնում նրա ընտանիքի անդամ-
ներին սրտացավության և մարդկային վեճ
գործերի համար: Երբեք չենք մոռանա տիկին
Սոնյայի անսահման հոգատարությունն իմ
երեխաների հանդեպ. նրա մայրական գորո-
վանքը շատ է օգնել, որ օտարության մեջ
գտնվող աղջիկս իրեն մենակ չզգա:
Երախտագրտ եմք բժիշկ Խաչատրյանի
ֆրանսիացի գործընկերներին, քանզի նրանք

ստանձնել են մեծ առաքելություն՝ բուժում և
օգնում են մարդկանց:
Շնորհակալ եմք Ա՛հ առողջապահության
նախարար Արա Բաղդասարյանի գլխավորությամբ
բժշկական ողջ անձնակազմին, մեծատառով
մարդ Սամվել Հակոբյանին, որը մեր ընտանի-
քին սատարում էր նաև, երբ Ասկերանի շրջ-
վարչակազմի դեկավար էր:
Հատուկ շնորհակալություն եմք ուզում
ասել Ասկերանի շրջանի բոլոր հանրակրթա-
կան դպրոցների մանկավարժական և աշա-
կերտական կոլեկտիվներին: Նրանց բարոյա-
կան և նյութական աջակցությունը մեզ շատ
օգնեց հաղթահարելու բազում դժվարություն-
ներ:
Այսօր հեռավոր Ֆրանսիայում գտնվող իմ
աղջիկը՝ Շուշանը, անչափ զգացված է Ասկե-
րանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ
դպրոցի մանկավարժական իր կոլեկտիվի,
աշակերտների ու նրանց ծնողների այնչափ
հոգատար և սրտացավ վերաբերմունքից:
Ինչպես չխոսնարիվես 3-րդ դասարանցի-
ների արարքի առաջ, ովքեր դասվար Ջարի-
նե Հարությունյանի ուղեկցությամբ մոմեր են
վառում Ասկերանի Սուրբ Աստվածածին եկե-
ղեցում և Ամենաբարձրյալից առողջություն
խնդրում համադասարանցի Վաղիմիրի հա-
մար:
Ի՞նչ կլինեք, եթե չլինեին բարի մարդիկ...
Աշխարհի բոլոր երեխաներին առողջու-
թյուն և խաղաղություն են մաղթում, թող գա-
լիք տարուն ոչ մի երեխա չհիվանդանա:

Սվետլանա ԱՄՐՅԱՆ
ԱՐ վաստակավոր մանկավարժ

ՀԱՅՐԵՆԻ ԵՋԵՐՔԻ ՍԻՐՈՎ



Անհուն սիրով ու հպարտությամբ
ընթերցեցի Շուշիի Արսեն Խա-
չատրյանի անվան պետական հու-
մանիտար բուհի (Մայիսի մանկա-
վարժական ուսումնարան) 1997թ.
շրջանավարտ իմ լավագույն, կեն-
սուրախ, ակտիվ ուսանողուհու՝
Վարսիկ Սանթրոսյանի հայրենասի-
րական պաթոսով գրված «Շահուն-
յան՝ մխացող օրրան» գիրքը: Շնոր-
հաշատ ուսանողուհիս ընթերցողին
է ներկայացրել ազատաբաղձ շա-
հունյանցիների պայքարն ու հերո-
սական սխրանքները, տեղահանու-
թյունն ու աշխարհով մեկ ցրվելը:
Գիրքն անփոխարինելի վավե-
րագիր է, հուշարձան՝ հայրենագի-
տության ծիրում: Այն շաղախված է
հայրենի եզերքի ջերմ սիրով, որը
հեղինակի անմնացորդ նվիրումն
է Գյուլիստան աշխարհին՝
պտղունց առ պտղունց տված
նրա դժվար պահերի մաքառումնե-
րի, ընդվզումների ու լուսավոր
սպագայի ճանապարհին, ասք հայ-
րենի բնաշխարհի, նվիրյալ գավա-
կների, «մխացող օրրանի» փրկու-
թյան ու հարատևության մասին:
Գիրքը ցավի ու հույսի մի սբան-
չելի համանվագ է՝ յուրատիպ կա-
ռուցվածքով: Նա ընդհանուր պատ-
կեր է ստեղծել հայրենի շահունյան-

ցիների բռնի տեղահանությունը,
նրանց տառապանքները, տարագ-
րությունը, աշխարհով մեկ ցրվելը
համեմելով ահասարսուռ դրվագնե-
րով (1992-1993թթ.)՝ մահվան ու
կյանքի, բարու և չարի, հիասքա-
փության և հույսի, վրեժի ու ներ-
ման, անեծքի և աղոթքի:
Գրքի ատաղձը հարցազրույց-
ներ են, ոչ միայն մեկ անհատի,
այլև արիստիտ նվիրյալների
հուշերը:
«Շահունյան՝ մխացող օրրան»
գիրքն Արցախյան գոյապայքարի
դրվագներից է: Հայտնի է, որ Լեռ-
նային Ղարաբաղի անկախության
համար նվաճված պայքարում ազա-
տամարտիկների սխրանքին համա-
հուն է շահունյանցիների հերոսա-
կան կանչը: Սրբախուսելի է, որ հե-
ղինակի ցավի ու հույսի իմաստա-
ցած այս գիրքը ինքնայրույնի մեջ
նոր էջ է պարզակելու որպես գալիք
հաղթանակների շոյալ սերմնացան,
վերադարձի հույս:
Հեղինակը սրտի անհուն թրթի-
ռով ու հուզիչ գույներով է պատկե-
րել ջքնաղ շահունյանցիների տե-
ղահանման վայրագության պահե-
րը, «մխացող օրրանի» վերջին օրե-
րը կյանքի ահասարսուռ, դժվար
խաչմերուկներում՝ հաստատելով,
որ նրանց առաջնորդում էր միայն
կենսարար Ոգին և փրկության Հույ-
սը:
Ահա թե ինչու չարաբաստիկ
եղեռնական օրեր տեսած ու ապ-
րած ցավն ու ողբը, կսկիծն իր մեջ
ամփոփած վրիժակ են դարձրել
Վարսիկին: Պատահական չէ, որ
բնության մեջ ամեն մի էակ անվերջ
կապված է լինում իր արմատներին,
իր բնօրրանին: Մարդն ամբողջ
կյանքում անբաժան է մնում իր ծն-
դավայրից, հայրական օջախից,
մանկության հուշերից, որոնց մա-
սին պատմում է ու վերապատմում...
Իսկ երբ գերված է հայրենի հողը,

օջախն ավերված, այն դառնում է
ավելի կարոտալի: Հիշենք Նաիրի
Ջարյանի հայրենաշունչ քառատո-
ղ՝ գրված 1941-ի հունիսի 22-ին.
Պու քաղոք ես, հող իմ հայրենի,
Չկա քեզմից պայծառ անուն,
Բայց վտանգի ահեղ ժամին
Պու ավելի ես քաղցրանում...
Ոխակալ թուրքի արմախում
երախից, բռնակալ ձեռքից մազա-
պուծ շահունյանցիները դարձան
համասփյուռ, տարագիր, օտար
ափերում հիմնեցին իրենց հայկա-
կան ուստանը, օջախը՝ ամեն մի
շյուղ կացնելիս հիշելով իրենց հայ-
րենի եզերքը, գեղատեսիլ Շահուն-
յանը:
1992թ. մայիսի 9-ին ազատագր-
վեց քանքարների ուստան Շուշին,
բայց մենք կորցրինք Արցախի հյու-
սիսային դարպասը՝ Շահունյանը
որպես հայկական ոգու ավանդույթ-
ներով հարուստ կենտրոն, որը մեզ
համար անչափ հոգեհարազատ է
իր բնաշխարհով ու մարդկանցով:
Մեզ ոգևորում է նրանց հայկական
ոգու կանթերը: Թեկուզ նրանք գտն-
վում են աշխարհի տարբեր անկ-
յուններում ոչ իրենց կամքով, չեն
կորցրել իրենց հայկական ավան-
դույթներով լեցուն կամքն ու կեն-
ցաղը, շահունյանական միասնու-
թյունը: Այդ կարևոր հարցում բարի
առաքելություն է կատարում բոլոր
շահունյանցիներին կամրջող, մեծ
խորհուրդ ունեցող «Մռավի դո-
ղանցները» թերթը: Այն դարձել է բո-
լոր շահունյանցիների գոյատևման
ջերմացնող պարարտ կիզակետ,
որի էջերում գետեղված ամեն մի
տող հայրենիքի, ընտանիքի, կարո-
տի, մարդկային ճակատագրերի,
սպասումների, հանդիպումների
հուզաբաթախ նշխարներ են ու
հուշի պատահիկներ:
Մենք լիախույս ենք, որ որտեղ էլ
գտնվեն շահունյանցիները, նրան-
ցից անբաժան են կարոտն ու ցավը

գերյալ հայրենիքի, «մխացող օր-
րանի» համար հային հատուկ ար-
ժանապատվությունը և վերադարձի
հույսը:
Հուրախություն՝ բռնագաղթած
շատ շահունյանցիներ վերաբնակ-
վում են նոր սահմաններով ձևավոր-
ված Շահունյանի շրջանում, իրենց
նվիրումով, կենսադիրքով վերա-
կենդանացնում հայկական հողը,
նպաստում ՀՀ և ԼՂՀ ամրապնդմա-
նը, որպես իրենց գերյալ շրջանի
ազատագրման երաշխիք՝ սպասե-
լով բաղձալի հաղթանակի:
Տա՛ Աստված, որ հույսի ու հա-
վատի համախմբմամբ իրականա-
նան նրանց երազանքները, տուն
դառնան հայրենակարոտ շահուն-
յանցիները՝ մոտիկից տեսնելու գե-
ղատեսիլ հայրենիքը, փարվելու
հայրենի Մոռվին, ողջագուրվելու
տունդարձի ակնկալումներով:
Թող ազատագրված Շուշիի
սուրբ Ամենափրկիչ Ղազանցեցոց
եկեղեցու փարձալուր դողանցնե-
րը բարի ավետիս լինեն համասփ-
յուռ շահունյանցիներին համախմ-
բելու և վերադառնալու ճանապար-
հին:
Սիրելի՛ Վարսիկ, ես հպարտ եմ,
որ քո ստեղծագործական մեկնար-
կում կան նաև իմ դասավանդած ոս-
կեղենիկ մայրենի լուսե շողերի ծի-
լերը:
Սրտանց շնորհավորում եմ «Շա-
հունյան՝ մխացող օրրան» գրքիդ
հրատարկման համար:
Թող քո հայրենաշունչ մտա-
հացման մեկնարկը շարունակա-
կան լինի, այսուհետև գրես ամբող-
ջությամբ ազատագրված Շահուն-
յանի երջանիկ ու խաղաղ օրերի
մասին: Ջերմ համբույրներով և բա-
րենադրանքներով՝
Լարիսա ՂԱԶԱՐՅԱՆ
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ
Ք. Շուշի

Ռաֆայել ՊԱՏԿԱՆՅԱՆ



Երնեկ թե այս Նոր տարին
Վերջ տար հայի ցավերին,
Չարը կորչեք, ու բարին
Բուն դներ մեր սրտերին:
Երնեկ թե այս Նոր տարին
Ազատ շնչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլելին արտ-անդատան:
Երնեկ թե այս Նոր տարին
Հայ ազգն ի մի գումարվեր,
Ի գլուխ Կարճո հայ ամրին
Հայու դրոշը կծածաներ:
Երնեկ թե այս Նոր տարին
Ոտքի կանգներ Հայաստան,
Եվ կիսաբանդ մեր Կարին
Լիներ քաղաք մեր ուստան:
Հայեր, երբեք չերկմտեք,
Կկատարվի այս ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրագություն մեր սրտեն...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info
Մեջերումների եւ փաստական տվյալների ստույ-
գությունն ապահովում են հեղինակները: Թերթը
ընթերցողների հետ գրագրություն վարելու պար-
տավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս»
ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝
տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 28.12.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: